ՆՈՐ-ԴԱՐ

№ 106 ՁՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի 2 Յուլիսի **1887** Հինգշաբթի 2 Յուլիսի ՁՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ № 106

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ., ամիսը՝ 1 ր. 50 կ., հատով՝ 5 կոպէկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բաժին 2 կ., երեսպաշտերի համար կրկնապատիկ։

«Նոր-Դար»-ին յուլիսի 1-ից բաժանորդ են գրվում և վճարում են 6 րուբլի։

Հասցէների փոփոխելու համար ուղարկում են խմբագրութեանս 7 հատ եօթը կոպէկանոց մարկա։

Հասցէն Тифлисъ, Редакція «Норъ-Даръ».

Ա Զ Դ

Այն յարգելի բաժանորդներից, որոնց բաժանորդագրութեան ժամանակը լրանում է յուլիսի 1-ին, խնդրում ենք, որ վերանորոգեն իրենց բաժանորդագրութիւնը, եթէ կամենում են շարունակ մինչև տարուայ վերջը ստանալ «Նոր-Դար»-ի համարները։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Լուրեր։
Թղթակցութիւններ.—Կողպ։ Նամակ Թիւրքիայից.—Կ. Պօլիս։
Քաղաքական.—Լուրեր։
Խառն լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագիրներ։
Բանասիրական.—Պալատ և խրճիթ (շարունակ.)։
Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

ԲԱԹՈՒՄԻՑ.—Այստեղի հասարակութիւնը այս ամառը չէր սպասում, որ հայերէն ներկայացումներ կը տեսնէ, այդ պատճառով չատ ուրախացաւ, որ Ադամեան և Սաֆրազները փչել են Բաթում։ Դրանք այժմ այստեղ են և արդէն մի քանի ներկայացումներ տուին ի մեծ ուրախութիւն թատրոնասէր հասարակութեան։

Պ. Ադամեանը մի ներկայացում տուեց յունիսի 15-ին, երկրորդ ներկայացումը յունիսի 19-ին էր. խաղաց «Քաղաքական մահ» կոչուած դրաման թատրոնասէրների մասնակցութեամբ։ Շատ ցաւում ենք, որ չատ եկամուտ չունեցան այդ ներկայացումներից։ Ինքս բոլորովին չեմ կարող գրել, վերևն ասացի որ ես բոլորովին չեմ, թէպէտև այժմեան ժամանակներում ներքաքանչիւր աղալ իրրև բոլորովին ապարիկ գալով, ես էլ կարող էի ինձ բոլորովին հռչակել, բայց մեկ կողմից տարիքս (արդէն 28 տարին անցել եմ) չէ ներում տղայութիւն անելու, երկրորդ «Նոր-Դար»-ը չի ընդունել այդ տեսակ բոլորովիններին։

Ամենայնիւնայնիւ ես ուզում եմ Ադամեանի ներկայացումների անաչդողութեան մասին իմ անձնական գոյք և սխալ նկատողութիւններս յայտնել։

Ասացէք խնդրեմ, ինչ նշանակութիւն ունի մեր հասարակութեան համար զանազան կատներից կազմած ներկայացումները։ Ինչ միտք ունի մեր հասարակութեան համար մի կատր Շիլլերի «Աւազակներից» կամ Համլէտի «Լինել կամ չլինել» մենոլոգը, այն էլ ֆրանսերէն...իսկ գոցեցուալ թաքինը ֆրանսերէն—դարբինների անդամ կարող էր ձանձրացնել, բայց բարեբաղդաբար դարբիններ չկան մեր մէջ այստեղ։

Անաչդողութեան մէկ պատճառն այդ է իմ կարծիքով, իսկ միւսը այն է, որ պ. Ադամեանը միմիայն իւր խաղի վերայ է ուշք դարձնում կարծես, ամենևին չէ մտածել դէթ մի փոքրիկ խումբ կազմելու, որ ինչպէս ասում են անսամբլ լինի խաղի ժամանակ։ Այդ չլինելով է նշանակուած։ Կը խաղան «Վարդանանց պատերազմ» 5 գործ. և Թուրքերէն մի վոդևիլ՝ «Ագահութեան գոհ»։

Յուլիսի 3-ին Ադամեանը կը մնայ կարճ ազատ ներկայացումներ տալու նպատակով։

Պ. Ադամեանը չեմ կարծում, որ չատ գոհ լինի Բաթումից, բայց անաչդողութեան պատճառն, իմ կարծիքով, ինքն է։

Ես Ադամեանին արդէն մի քանի անգամ Թիֆլիսի բեմի վերայ տեսել եմ, ուրախութեամբ դնացի և այստեղ նրա ներկայացումները տեսնելու։ Ես ինքս բոլորովին չեմ կարող գրել, վերևն ասացի որ ես բոլորովին չեմ, թէպէտև այժմեան ժամանակներում ներքաքանչիւր աղալ իրրև բոլորովին ապարիկ գալով, ես էլ կարող էի ինձ բոլորովին հռչակել, բայց մեկ կողմից տարիքս (արդէն 28 տարին անցել եմ) չէ ներում տղայութիւն անելու, երկրորդ «Նոր-Դար»-ը չի ընդունել այդ տեսակ բոլորովիններին։

Ամենայնիւնայնիւ ես ուզում եմ Ադամեանի ներկայացումների անաչդողութեան մասին իմ անձնական գոյք և սխալ նկատողութիւններս յայտնել։

Ասացէք խնդրեմ, ինչ նշանակութիւն ունի մեր հասարակութեան համար զանազան կատներից կազմած ներկայացումները։ Ինչ միտք ունի մեր հասարակութեան համար մի կատր Շիլլերի «Աւազակներից» կամ Համլէտի «Լինել կամ չլինել» մենոլոգը, այն էլ ֆրանսերէն...իսկ գոցեցուալ թաքինը ֆրանսերէն—դարբիններին

ՆՈՐ ՕԲՅԵԿՏԻՎ

Ս. ՓԱՇՈՎԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՄԱՆԿԱՎԱՐԱՑ ՀԱՆՐԱՀԱՇՎԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

Ս. Փաշովի անվան հայկական մանկավարական հիմնարկի մանկավարացի հանրահաշվային ժողովի

ՆԻՍՏ

Ս. Փաշովի անվան հայկական մանկավարական հիմնարկի մանկավարացի հանրահաշվային ժողովը 1887 թվի մարտի 23-ին գումարվեցավ նախագահությամբ Ս. Փաշովի անվան հայկական մանկավարական հիմնարկի տնօրեն Ս. Ղ. Ալիշանի։

Ներկա էին ամենայն անդամներ։

Ժողովը բացվեցավ ժամը 10 ½ ին։

Ընթերցվեցավ և ընդունվեցավ անցյալ նիստի արձանագրությունը։

Ընթերցվեցավ և ընդունվեցավ հետևյալ նամակը։

Ս. Փաշովի անվան հայկական մանկավարական հիմնարկի տնօրեն Ս. Ղ. Ալիշանին։

Ի պատասխան ձերդ պարոնության 1887 թվի մարտի 20-ի թվով գրության, որով ձերդ պարոնությունը ինձ հրավիրում եք ներկա գտնվելու Ս. Փաշովի անվան հայկական մանկավարական հիմնարկի մանկավարացի հանրահաշվային ժողովին, որ պիտի գումարվի մարտի 23-ին, ժամը 10 ½ ին, պատիվ ունիմ ձերդ պարոնությանը հայտնելու, որ ես անկարող եմ ներկա գտնվելու ասված ժողովին, որովհետև ինձ հրավիրված եմ եղել Ներսիսյան դպրոցի տնօրենության կողմից՝ ներկա գտնվելու նույն օրը տեղի ունենալիք քննությանը։

Ստորագրություն։

Ընթերցվեցավ և ընդունվեցավ հետևյալ նամակը։

Ս. Փաշովի անվան հայկական մանկավարական հիմնարկի մանկավարացի հանրահաշվային ժողովի

նը թաղնում են միւս օրուան և վերադառնում են Ղուրումլու, ուր և յայտարիր են ուղարկում մեր մասի պըրիստաւին։ Պարոն պրիստաւը միւս օրը գալով, իւր հետ առնում է Ղուրումլուի գիւղականներից մի քանի հոգի և մեր գիւղականների հետ չարունակելով խուզարկութիւնը, գիւղից մի վերստ հեռաւորութեամբ, մի ծառի տակ, տերեներով ծածկուած, գտնում է Ա. Զ.-ի սրով կտրատած և մորթած դիակը։ Դիակից մի փոքր հեռու ղըտնում են ձիու թամբը, բայց ձին մինչև օրս էլ անլայտ է։ Թամբի վերայ թողած է լինում Կողպի քահանայ Տէր-Աբգարի կնոջ պալտօն, Տարել են մի զինու տիկ, օրզանգոլի ղայիչները կամ ղուշխուն, Ա. Զ. հագինոր չուխան, գդակը և սուրը՝ իւր աշուրմա (արծաթիկ) քամարը, 50 ր. փողը...

Այժմ Ղուրումլուհեցիներից բռնուած են Սարգիս և Դարչօ Ղարաքէչիչեանները։

Այս բոլորի մասին Կողպի հասարակութիւնը 125 ստորագրութեամբ կազմելով մի գանգատ, ներկայացրած է դատախազին (Ելիսավետապօլի նահանգական դատարանի) և քննիչին։

Թէև մարդասպանութիւնները, աւազակութիւնները նոր բան չեն մեզ համար, համարեա ամեն օր կրկնուող երևոյթներ են դրանք, և այս դէպքն էլ չատ չատ դուցէ մի լուրի նիւթ էր, բայց եթէ մենք երկարացրինք, մեր նպատակն է եղել ցոյց տալ, մի նմուշ տալ, թէ ինչ պատճառներից չատ անգամ ծագում են մեզանում վէճեր, կռիւներ, ամբողջ գիւղերի թշնամութիւններ և մարդասպանութիւններ։

* * *

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. ՊՕԼԻՍ, 18 յունիսի («Նոր-Դար»-ի թղթակից).—Հացի խնդիրը այսօր մեծ մտահոգութիւն պատճառած է ինչպէս բոլոր աշխարհի, նոյնպէս ալ Թիւրքիայի։ Արդէն վաճառականութիւնը եթէ չէ մեռած ողջ ալ չէ. նոյնպէս ալ արհեստաւորը, որովհետև ինչ որ արհեստաւորը մեր մէջ օրն ի բուն արիւն քրտինք թափելով հազիւ մէկ կամ երկուք մը կրնայ չինել, նոյնը և իր չինածէն ալ փայլուկը մեքենային չնորհիւ եւրոպացին միևնոյն օրուան մէջ հարիւրաւորները կը ձուլէ, կը կարէ, կը չինէ և դրկելով մնդ՝ կը ծախէ մերինէն չատ աժան գնով։ Բայց ինչ ալ ըլլայ, վաճառականը եթէ օր ըստ օրէ կը հարստանայ՝ զէթ չահածը կը ծախսէ. նոյնպէս ալ արհեստաւորը քիչ կը չահի կամ քիչ կը ծախսէ և կամ ուրիշ իր արհեստէն տարբեր գործ մը կը գործէ և ո՛և է կերպիւ կապրի։ Իսկ գատակարգ մը կայ որ ո՛չ վաճառական է՝ որ դրամագլուխ ունենայ և չահի կամ չ'չահի ապրի, և ոչ ալ արհեստաւոր է որ կամ քիչ չահելով կամ խնայողութիւն ընելով օր մ'անցնէ, Այս այն գասն է որ պրչովը կաչխատի. որ կամ պաշտօնեայ է կառավարութեան, կամ ուսուցիչ, կամ տեսուչ, վերջապէս այս կարգի աշխատութեամբ պարապող դասը։ Թղթովք միւսները և իսկինք չատկապէս մեր կառավարութեան պաշտօնէից վրայ։

Առաջները պաշտօնեայ բառը (անչուչտ կառավարական) չռայլ նչանակութիւն ունէր. որովհետև այն ատենները պաշտօնէից նուազութիւն կար և չատ դժուար էր օրինաւոր գրել կարդալ գիտցող պաշտօնեաներ գտնել, գտնուածներն ալ ամեն օր պաշտօնի գլուխ էին և առատ ալ թոշակներ առնելով առանց վերջը հոգալու չռայլաբար կը մսխէին։ Եթէ նոքա պատահմամբ քիչ մը անպաշտօն մնալով նեղուէին սեղանաւորներէն փոխառութիւն կընէին, և քիչ ատենէ երբ պաշտօնի անցնէին, մէկէն երկուք կը հատուցանէին սեղանաւորին։ Իսկ այժմ անոր բոլորովին հակառակն է. և դրպրոցներն ու նոր սերունդը այնպիսի փոփոխութիւններ գործեցին պաշտօնէութեան մէջ, որուն զարթացմամբ հանգիստաս կը լինին նոյն իսկ հին պաշտօնատարք, որովհետև այսօր պաշտօնէութեան այնչափ հետամուտներ կան, որք եթէ քանի տարի առաջ ըլլային՝ անչուչտ մեծամեծ պաշտօններու գլուխ անցած պիտի ըլլային՝ իրենց այնչափ արժանիօքը։ Սակայն այսօր ձգէ մնծը, երկրորդական և երրորդական պաշտօններ ալ վարելու կը չժարին և զարձնալ չեն չտնղներ ձեռք անցնել. ըստ որում ամեն պաշտօնատանց մէջ տարիներով ձրի աշխատողներ կան՝ պաշտօն մը ստանձնելու չուսով։ Եւ այս չէ թէ սակաւաթիւ այլ ամեն պաշտօնատանց մէջ հարիւրաւորներ, որ ուրիշ բանի չվերազրուելը եթէ ոչ վաճառականութեան և արհեստներու անկման, որոնցմով հաց չկրնալով ճարել, քաղաքակիրթ դասը այս ճիւղին կը փարի, աւելացուր ասոր վրայ զպրոցականներու ամեն տարուայ չրջանաւարտներն ու հին պաշտօնեաները (որոնց մեծագոյն մասը նոր քննութիւններ տալու անկարող ըլլալով, զուրս ձգուած են պաշտօնէից դասէն) և կը տեսնես որ աչացդ առջև բաւական թիւով դատարկ մարդիկ կան, որը ստիպուած են, եթէ ոչ լաւ կերպիւ ուտել խմել, գոնէ ըստ կարելոյն լաւ հագնիլ և չչս ժողովրդեան բարձրը երևալ, մանաւանդ չատ անգամ այնպիսի անձանց պիտի ներկայանան պաշտօն խնդրելու, ուր անհնար է մտնել ռամիկ զգեստներով։ Ահաւասիկ այս վիճակի մէջ է մեր կառավարական պաշտօնէութիւնը, որուն կը պատկանէր մայրաքաղաքիս Ալա-Սթէֆանօ գիւղի քնակիչներէն կարապետ էֆէնտի Սիրունեան, որուն եղերական անճնասպանութիւնը ամեն սիրտ մորմոքեց։

Հանդուցեալը առևտրական և երկրագործական պաշտօնատան մէջ պաշտօնեայ էր գրեթէ երեսուն տարիներէ ի վեր և լաւ կը վարէր իւր պաշտօնը։ Կրթութիւնը Եւրոպա ստացած էր, չատուկ պաշտպանութեամբ հանգուցեալ Ալի-փաչայի. նա ամուրի էր և կը խնամէր իւր պաշտպանութեանը չանձնուած երեք քոյրերը։ Բաւական ժամանակ առաջ կը կասկածի, թէ իւր պաշտօնին հետամուտներ կան և ձեռքէն պիտի երթայ պաշտօնը, և քանի որ ո՛չ հարստութիւն և ոչ ալ ապրելու ուրիշ միջոց ունէր, օր մը դուրս կուգայ և չուսահատութենէն ինք զինքը ջրհորը կը նետէ։ Բարեբաղդաբար խեղճ քոյրերը, որոնց աչքը բնականաբար իրենց միակ նեցուկ եղող եղբօրը վրայ է ամեն վայրկեան, կը կասկածեն և դրսէն օգնութիւն կանչելով այս ալն կողմ նայելէ վերջը՝ ջրհորէն կը հանեն խեղճ Կարապետ էֆէնտին, որ թէև չէր մեռած, սակայն վրան մելամաղձոտութիւն մը գալով, բժիշկները կըսեն թէ չատ հաւանական է, որ այս մելամաղձոտութիւնը կրկնել տալ իրեն ուրիշ անգամ ևս այսպիսի անձնասպանութեան փորձ մը։

Անցեալ չորեքչարթի առաւօտ, երբ սովորական ժամուն քունէն չելլար, մեծ քոյրը զգուշութեամբ կը բանալ ննջարանին դուռը, և կը տեսնէ, որ Կարապետ էֆէնտին արտասովոր կերպիւ կը խորթայ։ Քիչ մ'ալ կը չառաջանալ և անկողինն ու պատկածքին դիրքը և սրտի ամենօրեայ երկիւղը կասկածներ կը ծնեն մէջը։ Քիչ մ'ալ կը մօտի, և ուշի ուշով դիտելով արեան բծեր կը տեսնէ անկողնոյն վրայ։ Վերջապէս դողդոջուն ձեռքով անկողինը վերցնելով, երբ իւր եղբօրը մօտ րէվոլվէրիկ մը կը տեսնէ, չկարենալով ալլ ևս ինք զինք զսպել՝ ճիչ մը կարձակէ և նուաղելով կիյնայ։ Ասոր վրայ միւս քոյրերն ու զրացիները օգնութեան կը հասնեն և իսկոյն բժիշկներ կը բերուին, որք քննելով կը տեսնեն, րէվոլվէրը ըղդիին պարպած էր, և գնդակը խիստ փոքր ըլլալուն բնականաբար անհնար էր հանել, որոյ հետևանքը պիտի ըլլար բաւական ժամանակ խորթալէ չետոյ մահ։

Վերջին օրը անձնասպանութենէն առաջ կարապետ էֆ. չինած էր իւր կտակագիրը, որով կը յայտնէր որ ինքը կամաւ գործած էր գայն և չէր ուզեր որ այս առթիւ հարցաքննեն ուրիշները։ Մանրամասն կերպիւ բացատրած էր իւր ուղիղ պաշտօնավարութեան երեսնամեայ ընթացքն և ուրիշ չատ պարագաներ։ Վերջերս ազարակաց քննիչ ատենն գանձապետ կարգուած ըլլալով, վստահութիւն կընէ սենեկապանին և հնիքը չատ անգամ քովը ձգած ըլլալուն, որ մի գուցէ փչեալ սենեկապանը իւր այս վստահութիւնը չարաչար գործածէ, և կանուն իւր ստացագրեր և այլն կնքած լինելով գինքը մեծամեծ պարտուց ենթակայ ընէ։ Ուստի բացարձակապէս չկանեղով որ ինքը ոևէ պարտք մը չունի, կպա. կառավարութենէն կը խնդրէ որ մանաւանդ մի ձեռքով քննուին իւր պաշտօնավարութեան տոմարները և քննութիւն մը բացուի փչեալ սենեկապանին համար։ Ի վերջոյ կպսերական կառավարութեան խնամոցը կը յանձնէ իւր արդարև խեղճ քոյրերը որք չունին ո՛չ հարստութիւն, ո՛չ ապրելու ուրիշ միջոց, և բաւական ալ տարկոտ ըլլալով ո՛չ գործելու կարողութիւն, այս գրերուն վեհ. սուլթանին առջև կարդացուելը խնդրելով կը վերջացնէ իւր գրութիւնն ու կեանքը։

Կարապետ էֆէնտիի գրպանէն մէկ լիրա և վիսուն փարայ գտնուեցաւ։

Քաղաքացի

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

—Գերմանական կիսապաշտօնական լրագիրները չարունակում են դեռ էլի դէմ գրել՝ գերմանական դրամագլուխները ռուսական արժէթղթերի վերայ գործ դնելուն։

—«Journal des Débats»-ը հաղորդելով այն լուրը, թէ Իտալիան օգտուելով այն հանգամանքից, որ իւր զօրքերը Մուսաւա ուղարկելու համար անց է կացնում Կարմիր ծովով, մտադիր է Եգիպտոսը գրաւելուն մասնակցելու իւր զօրքերով, և աւելացնում է որ այդպիսի վարմունքը կարող է խըճճումներ և մինչև իսկ վտանգ առաջացնել։ Լրագրի կարծիքով Իտալիան ոչինչ երաչխաւորութիւն չունի իւր աչառութեան համար։ Միակ պետութիւնը, որի մչտապէս Սուէզի ջրանցքում ճանալուն բոլոր պետութիւններն էլ կը համաձայնին—դա Սպանիան է։

—Ֆրանսիական երկրագործութեան մինիստր Բարբ, անօրինակ վարմունքով մտադիր է վերջացնելու իւր մինիստրութիւնը։ Չհամարձակութիւնը նա մտադիր է չանձնելու—գինուորական մինիստրութեան. երկրագործական ուսումնարանները.—կրթութեան մինիստրութեան, անդամները.—ֆինանսների մինիստրութեան. գիւղատնտեսական սինդիկատները.—վաճառականութեան մինիստրութեան, իսկ գիւղատնտեսական ցուցահանդէսները, —ներքին գործերի մինիստրութեան։

—Բելգիայի պատգամաւորների ժողովը արդէն քուէարկեց առաջին յօդուածները այն օրինագծի, որի նպատակն է բարելաւել մշակների դրութիւնը։ Բնականաբար մինիստրութիւնը ցանկանում է, որ մինչև պարլամենտական արձակուրդները, բոլոր օրինագիծը քուէարկուի որպէս զի Թագաւորի խոստումը կատարուած լինի։

—Եգիպտական պալմանագրի վերաբերմամբ Բրիւսէլի «Nord» թերթը ասում է, որ այն օրից, երբ Թիւրքիան իւր՝ Անգլիային կուսակից մինիստրների ասածին լսելով, կը գիջանի Անգլիայի սպառնալիքին, անգլօ-թիւրքական պալմանագիրը կը դառնայ մեռած տառ, և այն օրը, երբ բրիտանական կաբինէտը կը փորձէ իրագործել պալմանագիրը, որ արդէն ընդդիմութեան հանդիպեցաւ, կը հանդիպի բոլոր, որ լոկ պալտօնական չի լինի։

—Անցեալները Գերմանիայի պետական բարձրագոյն դատարանը քննեց և դատապարտեց մի քանի անձերի, և ի թիւս որոնց մի ֆրանսիացու՝ որովհետև նա պատկանում էր հայրենասէրների միութեան։ Այժմ ի պատասխան դրան, Ֆրանսիայի պատգամաւորների ժողովում պատգամաւոր Դրէյֆուս առաջարկել է մի օրինագիծ, որով բոլոր օտարահպատակները, որոնք պատկանում են Ֆրանսիային հակառակ շահեր ունեցող ընկերութիւնների, պատժուին մինչև երկու տարուայ բանտարկութեան։ Այս նախագիծը ուղղակի ուղղուած է գերմանական գինուորական «Kriegerbung» կոչուած խմբերի դէմ։

—Վէննայի «Presse» թերթը հաղորդում է, որ ռուսական արժէթղթերի դէմ գերմանական կիսապաշտօնական թերթերի սկսած արշաւանքը սկիզբն է այն խիստ միջոցների, որոնք պէտք է նչանակուին ի պատասխան Ռուսիայի այն կարգադրութեան, որով արևմտեան սահմանի մօտ նահանգներում օտարահպատակը իրաւունքից զրկուած է անչարժ կալք ունենալու։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

(Մեր երկրի կեանքից)

—

Ուտիացին ուզում էր Հայր սուրբին ընծայ տանել, հարցրեց թէ ինչ պիտի ասէ մօտը գնացած ժամանակ։ Սովորեցրին։ Մտից չընկնելու համար ըսկսեց սերտել. Աթոռած օգնական, Աթոռած օգնական, և մի քանի անգամ էլ դասը կրկնեց դուրսը և ընծան ձեռքն ներս մտաւ, Հայր սուրբի աչքն առնելով արտասանեց.—Աստուածած... Աստու...ա...ծ։ Ինչքան չարչարուեց, ունքերը հոպ տուեց, տանջուեց, մէկել խօսքը միտը չընկաւ։ Նորից պինչը դրեց Հայր սուրբի աչքի վերայ։—Աս... տու...ած. խօսքը երկարացրեց, գուցէ մոռացած խօսքը միտը գայ, չ'աջողուեց. իսկ վարդապետը անտեղեակ զարմանքից վեր էր քաշուել, թէ ինչ է ուզում էս մարդը։ Ուտիացին քրտնքում մնալով տեսաւ, որ հակառակն պէս իմացած խօսքն էլ մտից ընկաւ, վարդապետի աչքը նորից համբուրեց ու ասեց.—Հայր սուրբ, բիր անտէր սէօզ վար, հաղրմեան չըխսուի.—Օրհնեա աէր։

* * *

Դալլաքը մէկին հարցրեց.

—Ինչպէս վէր անիմ գլուխդ։

—Քէօռ օղլուի գլխի պէս վէր արա, ուստա։ Դալլաքը չիրչեց գլխի մազերը, ածիլին քաշեց չոր ու ցամաք գլուխը սկսեց տակից դէպի վերև ածելել։ Մի քիչ նամուս անելով գլխացաւ, արտասուքը առու դառած աչքերից հոսում էր. երբ սատիկ ցաւից, և կաշուի մզկտալուց ճարը կարուեց, աղաչելով ասեց.—Չան ուստա, էնքան էլ թուղդ քէօռօղլուներից չեմ, միացածը թրչի, հետդ վէր արա։

* * *

Ղարաբաղցին բռնած էչը առաջին գնում էր գեղը, ճամփին իսի չատ գըլխաւվէր էր։ Գիւղացին համ էչը ծանր քչում էր, համ մի բերան ասում.—Ցակոբ հայրապետ, դու պահպանես, Ցակոբ հայրապետ, դու պահպանես։ Էս ասելում էչի ոտը սկըհաց. Բըբ'դէ վէր ընկաւ ու բռնան հետ գլորուելով դէպի գլխավէր վազեց։ Գիւղացին ճարը կտրած ձայն տուեց.—Չան Ցակոբ հայրապետ, գլխիդ ճարը տես, ճամփից փախի, թէ չէ էչը եկաւ, քեզ կոնչեցնէ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԴՈՐՆԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԱՐԻԶ. 30 Յունիսի։ Պատգամաւորների ժողովում Ծալբահեղ Ճախակողմեանների անդամ Բեվիլիօնը մեղադրում էր մինիստրութեան, որ նա միջին դիրք է բռնում Պարիզի գրաքից հաւանութիւն ստացած՝ աջակողմեանների վարմունքներին։ Մինիստր—նախագահը պատասխանեց, որ երբ մինիստրութեան գլուխ անցաւ, նա խնդրեց բոլոր Հասարակապետականների աջակցութիւնը, բայց մի մասը այդ մերժեց, որովհետև գեներալ Բուլանժէն նոր մինիստրութեան մէջ չընդունեցաւ։ Բաւական ժամանակից ի վեր գեներալ Բուլանժէն հակաօրինական ցոյցերի պատճառ է եղել, ուստի կառավարութիւնը կարևոր համարեց նրան կրկին զօրքի շարքի մէջ մտցնելու. եթէ նա այնպէս վարուէր, քաղաքացիական իշխանութիւնը գոյութիւն չէր ունենալ։ Կառավարութիւնը Հասարակապետականների մեծամասնութեամբն է ուզում կառավարել երկիրը։ Մինիստրութեան անդամները անկեղծ Հասարակապետականներ են, բայց նրանք ոչ ոքին չեն ուզում Համոզմունքի Համար հալածել։ Կլեմանսօն դատապարտում էր կառավարութեան գործունէութեան եղանակը և յայտարարեց, որ Բուլանժէն բոլորովին արդարանում է գերմանական մամուլի աջակողմեանների յարձակումներով։ Բուվիէն յայտարարեց, որ պատգամաւորների ժողովում կան 400 Հասարակապետականներ, եթէ կէսը դէմ լինի մինիստրութեան, իսկոյն ինքը հրաժարական կտայ։ Բուվիէվի պահանջը՝ Հասարակ ձևով միւս գործերի քննութեան անցնելու մասին ընդունուեցաւ 382 ձայների մեծամասնութեամբ 120-ի դէմ։

ԿՕԲՈՒՐԳ. Այստեղի պաշտօնական լրագիրը կրկին յայտարարեց, որ Կօբուրգի տան պետը չ'թոյլ տուեց Կօբուրգի պրինցին ընդունելու բօլղարական գահը։

ՎԵՆՆԱ. Կօբուրգի պրինցը հեռագրեց Ստամբուլովին, որ բօլղարական պատգամաւորութեան կընդունի յուլիսի 3-ին։

ՍՕՖԻԱ. Նոր մինիստրութիւնը կազմակերպուեցաւ երէկ երեկոյեան և Հետևեալ կազմութիւնն ունի. Ստօյլովը—մինիստրների խորհրդի նախագահ, արդարադատութեան մինիստր և ֆինանսների մինիստրութեան ժամանակաւոր կառավարիչ. Նաչևիչը—արտաքին գործերի մինիստր, Ստրանսկի—ներկայումս Բելգրադում բօլղարական դիպլոմատիկական գործակալը—ներքին գործերի մինիստր, Զումակով—ժողովրդական կրթութեան մինիստր։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

30 Յունիսի

Լօնդօն $21^{3}/_{16}$, $21^{11}/_{32}$, $21^{7}/_{32}$.
Համբուրգ $179^{7}/_{8}$, $180^{1}/_{2}$, $180^{1}/_{4}$.
Պարիզ $222^{7}/_{8}$, $223^{1}/_{8}$.

Պօլուիմպերիալ 9 ր. 34 կ. սակ.
Մ'աքս. կուպոն. 180¹/₄ ր. — կ. սակ.
Արծաթ՝. . . . 1 ր. 27 կ. սակ.
Բօրսային դիս. 4⁵/₈ և 6¹/₂%
Պետակ. բանկի 5% տոմսեր.
1-ին շրջանի 100 ր. — կ. սակ.
2-րդ » . . 99 ր. 12 կ. գն.
3-րդ » . . 99 ր. 12 կ. գն.
4-րդ » . . 99 ր. 12 կ. գն.
5-րդ » . . 99 ր. 12 կ. գն.
6-րդ » . . —
100 և 1000 արևելեան փոխառութեան 5% տոմսեր
1-ին շրջանի 98¹/₂ ր. — կ. գն.
2-րդ » . . 98 ր. 62 կ. գն.
3-րդ » . . 98 ր. 87 կ. սակ.
Առաջին ներքին փոխառութեան 5% տանող գումարի տոմսեր . . . 261 ր. — գն.
2-րդ . . . . 246¹/₄ ր. — սակ.
5¹/₂% բենտեր 102 ր. — կ. գն.
Ոսկէ բենտ. 192¹/₂ ր. — սակ.
Թիֆ. քաղաք. վարկի ընկեր.
օբլիգ. . . . . — ր. ծախ.
Վերջին 4% փոխառութիւնը 83 ր. 37 կ. գն.

Պետերբուրգի բօրսայի դրութիւնը հաստատ է։

ՊԱՐԻԶ. 1 Յունուար։ Ֆինուորական մինիստրի ցանկութեան համեմատ, պատգամաւորների ժողովը որոշեց որ այսօր քննուի հեծելազօրը աւելացնելու հետևակ զօրքը կազմակերպելու օրինագիծը։

Բուլանժէի մասին տեղի ունեցող բուռն վիճաբանութիւնների պատճառով, պատգամաւորների ժողովի նախագահ Ֆլօկէն հրաժարական տուեց, բայց ժողովը միաձայն որոշեց չ'ընդունել հրաժարականը։

ՎԵՆՆԱ. Այստեղ եկաւ բօլղարական պատգամաւորութիւնը, որ ուղևորում է Կօբուրգի պրինցին յանձնելու՝ ընտրողական վճիռը։

ԲԵԼԳՐԱԴ. Երէկ թագուհին ժամանեց այստեղ. նրան դիմաւորեցին թագաւորը և մինիստրները։

Մինիստրութեան ճգնաժամի մասին ձայները անհիմն են։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. 1 Յունուար։ Առաջին ներքին փոխառութեան վիճակահանութեան միջոցին գլխաւոր գումարները այսօր տանող տոմսակներն են.

№ սերիայի	№ տոմսի	Տարած գումարը	№ սերիայի	№ տոմսի	Տար. գումարը
7,096	12	200,000	341	48	
15,940	1	75,000	8,495	25	
9,920	18	40,000	10,336	25	
13,813	11	25,000	12,806	9	
14,696	42	10,000	14,544	1	
12,093	7	10,000	9,562	49	
5,834	11	10,000	18,328	23	
2,072	21	8,000-ական	4,995	39	
15,143	15		4,326	7	
5,329	32		12,187	30	
16,550	39		7,466	20	
9,913	13		16,158	41	
11,497	13		8,547	20	
15,313	19		7,824	38	
4,760	28		14,554	11	
*			13,013	13	
110579	22	5,000-ական	8,209	16	1,000-ական
9,764	17		13,938	28	
4,234	32		8,082	48	
11,557	38		9,549	20	
8,573	35				

*) Ճիշտ չէ. ստուգութիւնը պահանջուած է։

Խմբագիր-հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ.

գնացքների երթևեկութիւնը «Թիֆլիսի» կայարանում։

Բաթում գնում է օրաստ. առաւ. 8 ժ. 49 վ.
Բաթումից գալիս է ,, երեկ. 10 ժ. 15 վ.
Բագու գնում է ,, երեկ. 10 ժ. 46 վ.
Բագուից գալիս է ,, առաւ. 8 ժ. 6 վ.
Թիֆլիսից Սուրամ գնում է ապրանքակէբ-մարդակիր գնացքը ցերե. 3 ժ. 21 վ.
Սուրամից գալիս է ապր. մարդ.
գնացք առաւ. . . . . 8 ժ. 24 վ.
Թիֆլիսից խառն գն. առաւօտ. 9 ժ. 30 վ.
Ազատաֆայից ,, ,, երեկոյեան 9 ժ. 10 վ

ՇՈԳԵՆԱՒԵՐԸ

ԲԱԹՈՒՄԻՑ ԳՆՈՒՄ ԵՆ

Օդեսա—շաբաթ օրերը երեկոյեան 8 ժ. շրջանառու ընթացքով։
Հինգշաբթիները երեկ. 4 ժ. ուղիղ ընթացքով։
Կ. Պօլիս.—երեքշաբթիները երեկոյեան։

ԲԱԹՈՒՄ ԵՆ ԳԱԼԻՍ

Օդեսայից.—Ուրբաթ օրերը. առաւօտեան ուղիղ ընթացքով։
Երեքշաբթիները կէս գիշերուայ մօտ շրջանառու ընթացքով։
Կ. Պօլսից.—Շաբաթ առաւօտները։

Վլադիկավկազից դուրս են գալիս.

—

Ա. Հինգհոգուանոց ուղևորական կառքը

1) Առ. 7 ժ. գիշերանոցը՝ Գաստանուսում, Թիֆլիս հասնում է միւս օրը երեկոյեան 6 ժ.

2) Առ. 9 ժ. գիշերանոցը՝ Մլխեթում, Թիֆլիս հասնում է միւս օր երեկոյեան 8 ժ.

Բ. Վեցհոգուանոց ուղևորական կառքը

1) Ցերեկուայ 4 ժ. առանց գիշերելու միւս օրը երեկոյեան 7 ժ. հասնում է Թիֆլիս։

2) Ցերեկուայ 6 ժ. 30 վ. առանց գիշերելու միւս օրը երեկոյեան 9 ժ. 50 վ. հասնում է Թիֆլիս։

1887-ի մայիսի 15-ից Վլադիկավկազի և Թիֆլիսի միջ կառաչին երթևեկութեան հետևեալ կարգն է նշանակուած։

Թիֆլիսից դուրս են գալիս

Ա. Հինգհոգուանոց ուղևորական կառքը

1) Առ. ժ. 7-ին. Գիշերանոցը Գուդուաթի կայարանում. Վլադիկավկազ հասնում է միւս օրը երեկոյեան ժամը 8-ին։

2) Առ. ժ. 9-ին։ Գիշերանոցը Մլխեթում. Վլադիկավկազ հասնում է միւս օր ժ. 8-ին։

Բ. Վեցհոգուանոց ուղևորական կառքը

1) Ցերեկուայ ժ. 4-ին, առանց գիշերելու միւս օրը ցերեկուայ ժամը 7-ին հասնում Վլադիկավկազ։

2) Ցերեկուայ ժ. 5-ին, առանց գիշերելու միւս օր երեկոյեան 8 ժ. հասնում է Վլադիկավկազ։

Լոյս տեսաւ մամուլի տակից և վաճառվում է Մոսկվայում հետևեալ գիրքը. «1836—1886. Празднованіе Пятидесятилѣтняго Юбилея ученo-педагогической дѣятельности Н. О. Эмина подъ редакціей Г. А. Халатьянца Москва 1887». Հանդէս յիսնամեայ յօբելէյնի գիտնական և մանկավարժական գործունէութեան Մկրտչի Էմինի, որի պատկերով զարդարած է գիրքը։ Վերջնիս բովանդակութիւնը այս է՝

I. Приготовленія къ Юбилею. Извлеченія изъ протоколовъ засѣданій комитета по устройству Юбилея Н. О. Эмина.

II. Празднованіе Юбилея въ залахъ Лазаревскаго Института Восточныхъ языковъ. Пріемъ депутацій, чтеніе адресовъ и привѣтствій.

III. Обѣдъ въ честь юбиляра. Рѣчи и привѣтствія, сказанныя юбиляру за обѣдомъ.

Приложеніе. Библіографическій списокъ трудовъ Н. О. Эмина. Գիրքի գինն է Մոսկվայում 1 րուբլի (3 ֆրանկ)։ Օտարաքաղաքացիները, բացի դրանից, իրրև ճանապարհածախս պէտք է ուղարկեն 3 հատ 5 կոպէկանոց պօստի մարկա։

Գնել ցանկացողները թող բարեհաճեն դիմել այսպէս՝ Въ Москву, Лазаревскій Институтъ Восточныхъ Языковъ, Христофору Ив. Іоаннесянцъ.

2—1

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ԵՐԹԵՒԵԿՆԵՐԻ

ԲԺՇԿԱՊԵՏ ՔՈՒՉԱՐԵԱՆՑԻ

Եքսառնէան հրապարակում Ծննդեղբօր պոնը.)

Ընդունելութիւնը ամեն օր.

Առաւօտեան 9—10 ժամին Ա. Բախտաւոր—կանանց և երեխաների հիւանդութիւնների, 10—12 ժամին Կ. Բախտաւոր—ներքին ջղային հիւանդութիւնների և էլէքտրական բժշկութիւնն. 12—1 ժամին Գ. Քուչարեանց—Աչքերի, վիրաբուժական, աչքի և վերնրական (ծածուկ) հիւանդութիւնների։

Երեկոյները 6—8 ժամը, իսկ չորեքշաբթի և շաբաթ երեկոեան ժամերին կոկորդի և ականջի հիւանդութիւնների։

Ամենաչքաւոր օր քննւում են ծծմայրների և ծառաների առողջութիւնները և ծաղիկ են կարում։

Վարձ խորհրդի համար առաւօտեան 40 կ., իսկ երեկոեան 60 կոպէկ։

Չքաւորները անվարձ։

Հիմնադիր բժշկապետ
Գ. ՔՈՒՉԱՐԵԱՆՑ.

X—31

ՍՊԱՆԴԱՐԵԱՆԻ ՏԱՆԸ

Սօլօլակի փողոց, № 12 իշ. Հերակլի տան հանդէպ տրւում են վարձով քնակարանները 5, 3 սենեակներից բաղկացած իրենց յարմարութիւններով։ Նոյնպէս տրւում են առանձին սենեակներ։

(Խ.) 6—4

ԲԺ. ՄԻՍԱՔ ԱՐԱՄԵԱՆՑ

ՍԱԼԻՒՆԻՑ ԷՋՄԻԱԾԻՆ

ՆԿԱՐԱԳԻՐ

ՈՒԽՏԱՒՈՐ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ

ԳԻՔՔԸ

Շուտով լոյս կը տեսնէ, բազմաթիւ կարևոր փոփոխութիւններով, արտատպած «ՆՈՐ-ԴԱՐ» լրագրից։

ԳԻՆՆ Է 30 ԿՈՊԷԿ

Բացառապէս կարելի է ստանալ Թիֆլիս—«Նոր-Դար»-ի խմբագրատանը, Բագուում—պարոն Գրիգոր Դիլդարեանի մօտ։ X—23

ԻՍԿԱԿԱՆ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐ

„ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԶԻՆԳԵՐԻ“ ՆԻՒ-ԵՕՐԿՈՒՄ

ԱՐԺԱՆԱՑԱԾ

ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԲՈԼՈՐ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍՆԵՐՈՒՄ

ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ

Կարևոր ընկերներ տան տիկինների և ազնիւ օգնականներ բոլոր արհեստաւորների համար

ԳՏՆՎՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թիֆլիսում. Զինգերի ընկերութեան կեդրոնական պահեստում, Գօլօվինսկի պրօսպեկտի վերայ, Մ'իրիմանովի տան և նրա բաժանմունքների մէջ։

Բագուում. Մ'իքայէլեան փողոցում, Մ'իրզա Ասադեանի տ.
Քութայիսում. Բուլվարի դէմ, Չերեկովի տ.
Բաթումում. Պօլիցիական փողոցում, Թէրզի օղլու տ.
Թեհրանում. Մարշ-Մէյդանի դէմ, բուլվարի վեր։

Ա՛ն որոնց ճանապարհորդող գործակալներ չօդ

ՄԻԶԻՆ ԵՒ ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԵՒՐՕՊԱՑԻ ՀԱՄԱՐ ԶԻՆԴԵՐԻ ԵՒ ԸՆԿ. ԳԼԽԱՒՈՐ ԳՕՐԾԱԿԱԼԻ ՄՕՏ



Գ. ՆԷՑԳԼԻՆԳԵՐ

ԶԻՆԳԵՐԻ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԻՍԿԱԿԱՆ ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԵՏԵՒԵԱԼՆ ԵՆ

1) Մեքենաները ունին ընդարձակ գործարան և համաշխարհային հռչակ։ 2) Գները ամենէնափաւորներն են և միայն Զինգերի ընկերութեան մէջ։ 3) Ամեն տարի ծախվում է մօտ 700,000 հատ։ 4) Մեքենայի յատկութեանը չէ կարողացել նմանեցնել ոչ մի կարեմեքենայի գործարան։ 5) Թէ մեքենաները և թէ նրանց օգնական գործիքները միշտ լաւանում և կատարելագործվում են։ 6) Կարելի է ընտրել ամենամեծ քանակութեամբ և ամեն տեսակ ընտանեկան, արհեստաւորների համար մեքենաներ նաև մասնագիտական մեքենաներ զինուորական հագուստներ կարելու համար։ 7) Այս հռչակուած մեքենաները ամեն մարդ հեշտութեամբ կարող է ձեռք բերել։ Գնողները կարող են, եթէ կամենում են գրամը հետզհետէ վճարել սակաւ քանակութեամբ, այն է շաբաթով, կամ ամսով և կամ ժամանակամիջոց ստանալ գրաւականով գրամը վճարելու համար։ 8) Մեքենայի վերայ կատարելագէս և հիմնաւոր սովորելը ձրի է հմուտ վարպետուհիների համար։

Յ. Գ. Զինգերի և ընկ. բոլոր պահեստներում գտնվում են մեքենաներին պատկանելի գործիքները, ինչպէս են ասեղները, թել, մետաքս և այլ, մեքենային պատկանելի։ իրեղէնները ամենաչափաւոր գներով։

60—17

Дозволено цензурою Гифлисъ 1-го Іюля 1887 г. Տպարան Մ. Դ. Ռոտինեանց Типографія М. Д. Ротиніанцъ Гол. пр. д. № 41.